

«ՉԱՆԳԵՉՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈՒԽԻՔԻՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ

Կլիմայական փոփոխությունների դեմ պայքարի ռազմավարություն 2026-2040թթ.

**ՉՊՄԿ ՓԲ ընկերության կլիմայական փոփոխությունների
դեմ պայքարի ռազմավարություն 2026-2040թթ.՝ SBTi-ի
(Գիտահեն թիրախների նախաձեռնություն) և TCFD-ի
(Կլիմայի հետ կապված ֆինանսական բացահայտումների
աշխատանքային խումբ) սկզբունքներին համահունչ:**

*Ռազմավարությունը վերանայվել է հիմք ընդունելով անկախ ռիսկային ազդանշանների
գնահատման արդյունքում ներկայացված առաջարկությունները (Wood Mackenzie,
Մարտ 2026).*

SBTi
SERVICES

TCFD | TASK FORCE ON
CLIMATE-RELATED
FINANCIAL
DISCLOSURES

«ՉԱՆԳԵՉՈՒՐԻ ՊՂՆՁԱՍՈՒԿԴԵՆԱՅԻՆ ԿՈՍՄԻՍԱՏ» ՓԲԸ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՍՓՈՓԱԳԻՐ

«Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն (ՉՊՄԿ) որդեգրել է կլիմայի ակտիվ ռազմավարություն, որը համատեղում է հավակնությունները գործնական իրագործելիության հետ: Մենք սահմանել ենք ռազմավարական նպատակ՝ մինչև 2040 թվականը 20%-ով նվազեցնելու մեր շրջանակ 1 (Scope 1) և շրջանակ 2 (Scope 2) դասակարգմամբ շեմոնցային գազերի (ՋԳ) բացարձակ արտանետումները (2022թ.-ի ելակետային ցուցանիշների համեմատ): Սրանով մենք փաստում ենք կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության պայքարին ուղղված համաշխարհային ջանքերին նպաստելու մեր վճռականությունը՝ միաժամանակ հաշվի առնելով ԸՆկերության գործառնական միջավայրի օբյեկտիվ իրողությունները:

Այս երկարաժամկետ թիրախը ընդգծում է կայուն հանքարդյունաբերության ոլորտում առաջատար լինելու մեր մտադրությունը՝ ազդարարելով արտանետումների շարունակական և էական կրճատման մեր հանձնառությունը: Միևնույն ժամանակ, մենք որդեգրում ենք ճկուն մոտեցում. ռազմավարությունը պարբերաբար վերանայվելու և ճշգրտվելու է՝ տեխնոլոգիական զարգացումներին, նոր հնարավորություններին և արտաքին գործոնների փոփոխությանը համահունչ: Այս կերպ ՉՊՄԿ-ն նպատակադրված է գործել կլիմայի մեղմման և հարմարվողականության պայքարին ուղղված գործողությունների միջազգային լավագույն փորձին համապատասխան՝ պահպանելով ապագա զարգացումներին արձագանքելու օպերատիվությունը:

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐԸ

ՆԿԱՐԱԳԻՐ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ

Միջազգային մեխանիզմների հետ ինտեգրում

ՉՊՄԿ-ն այս ռազմավարությունը մշակել է երկու հիմնական նպատակով. առաջին՝ ներքին պլանավորումը դարձնել ավելի դյուրին՝ հստակ գործողությունների ճանապարհային քարտեզներով, և երկրորդ՝ բավարարել շահագրգիռ կողմերի ակնկալիքները՝ ապահովելով հաշվետվողականություն և թափանցիկություն: Մեր մոտեցումը համահունչ է SBTi-ի (Գիտահեն թիրախների նախաձեռնություն) հետ՝ երաշխավորելով, որ արտանետումների կրճատման մեր թիրախները հիմնված են կլիմայի վերաբերյալ գիտական հաշվարկների վրա, ինչպես նաև համապատասխանում են TCFD-ի (Կլիմայի փոփոխության վերաբերյալ ֆինանսական տեղեկատվության բացահայտման հարցերով աշխատանքային խումբ) սկզբունքներին՝ կառուցակարգելով ռիսկերի կառավարումը միջազգային լավագույն փորձի համաձայն:

ՉՊՄԿ-ի կլիմայական հավակնությունները ձևավորվում են պղնձի արդյունահանման համաշխարհային ոլորտում փոփոխվող ակնկալիքների համատեքստում: Մինչ ոլորտի այլ ընկերություններ հանդես են գալիս ավելի հավակնոտ նպատակներով, ՉՊՄԿ-ն իր կլիմայական նպատակները սահմանել է՝ համահունչ իր ընդհանուր ռազմավարությանը և մետաղների համաշխարհային պահանջարկի կանխատեսումներին:

Ոլորտային համատեքստ

Լինելով ածխածնի արտանետումների տեսանկյունից բարձր ոլորտ՝ հանքարդյունաբերությունը բախվում է յուրահատուկ մարտահրավերների հետ: Մեր ռազմավարությունը հաշվի է առնում այն, որ պղնձի և մոլիբդենի համաշխարհային պահանջարկը մինչև 2040 թվականը կարող է կրկնապատկվել՝ «մաքուր էներգիայի» անցման գործընթացով պայմանավորված, ինչը առանց համապատասխան միջամտության, կարող է հանգեցնել արդյունաբերական արտանետումների զգալի աճի: ՉՊՄԿ-ի նախաձեռնողական մոտեցումը թույլ է տալիս ԸՆկերությանը արդյունավետորեն կառավարել առաջացող նորմատիվ և շուկայական ռիսկերը՝ ինչպիսիք են ԵՄ ածխածնային սահմանային կարգավորման մեխանիզմը, Հայաստանի ազգային կլիմայական քաղաքականությունը և հաճախորդների կողմից սահմանվող արտանետումների չափանիշները՝ միաժամանակ պահպանելով մրցունակությունն ու շուկաների հասանելիությունը:

ՉՊՄԿ-ն ներդրել է նորմատիվային մոնիտորինգի գործընթաց՝ Հայաստանում, ԵՄ-ում, ԱՄՆ-ում, Չինաստանում և այլ համապատասխան շուկաներում կլիմայի հետ կապված կանոնակարգերին հետևելու համար: ԸՆկերությունը նաև նախատեսում է մասնակցել ոլորտային միությունների (օրինակ՝ Միջազգային պղնձի ասոցիացիա և Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհուրդ) գործունեությանը, ինչպես նաև շահագրգիռ կողմերի հետ քննարկումներին՝ քաղաքականությունների մշակման գործընթացում ներգրավվելու և օրենսդրական փոփոխությունների կանխատեսման համար:

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ԳԻՏԱՅԵՆ ԹԻՐԱԽՆԵՐ

Հիմնական նպատակ

Հիմնական թիրախ. մինչև 2040 թվականը 20%-ով կրճատել 2ՊՄԿ-ի շրջանակ 1 և շրջանակ 2 ջերմոցային գազերի բացարձակ արտանետումները (2022թ.-ի ցուցանիշների համեմատ):

Գիտականորեն հիմնավորված այս թիրախը համահունչ է Փարիզյան համաձայնագրի ջերմաստիճանային նպատակներին՝ հաշվի առնելով մեր ոլորտի առանձնահատկությունները և տարածաշրջանային պայմանները:

Շրջանակ 1 (Scope 1). Ներառում է ուղղակի ՁԳ արտանետումներ՝ 2ՊՄԿ-ին պատկանող կամ նրա կողմից վերահսկվող աղբյուրներից (օրինակ՝ ընկերության տրանսպորտային միջոցներում և սարքավորումներում վառելիքի այրումը):

Շրջանակ 2 (Scope 2). Ներառում է անուղղակի ՁԳ արտանետումներ, որոնք գոյանում են ձեռք բերվող էլեկտրաէներգիայի և էներգիայի սպառման արդյունքում: Մեր կենտրոնացումն այս շրջանակների վրա պայմանավորված է Ընկերության անմիջական վերահսկողության տակ գտնվող գործոններով:

Շրջանակ 3 (Scope 3) արտանետումների ռազմավարություն


2ՊՄԿ-ի շրջանակ 3 (Scope 3) արտանետումները կազմում են Ընկերության ջերմոցային գազերի ընդհանուր արտանետումների մոտ 70%-ը (համաձայն 2024թ. Կայուն զարգացման հաշվետվության): Թեև սույն ռազմավարության հիմնական թիրախը վերաբերում է շրջանակ 1 և 2 արտանետումներին, Ընկերությունը պարտավորվում է համակարգված կերպով կառավարել և փոխհատուցել շրջանակ 3 արտանետումները՝ մատակարարման շղթայի շրջանակում իրականացվող կայուն զարգացման նախաձեռնությունների միջոցով:

Այդ նպատակով սահմանվել են հետևյալ առաջնահերթությունները.

- **Շրջանակ 3 արտանետումների գնահատում և առաջնահերթությունների սահմանում.** մինչև 2027թ.-ի ավարտը իրականացնել շրջանակ 3 արտանետումների ամբողջական ինվենտարիզացիա՝ համաձայն Ջերմոցային գազերի հաշվառման արձանագրության (GHG Protocol), ինչպես նաև նույնականացնել բարձր ազդեցություն ունեցող հիմնական կատեգորիաները (ներառյալ գնված ապրանքներն ու ծառայությունները, վառելիքաէներգետիկ գործունեությունը, մատակարարման շղթայի սկզբնական փուլում իրականացվող փոխադրումները և վաճառված արտադրանքի վերամշակումը):
- **Մատակարարների ներգրավում.** մշակել և իրականացնել մատակարարների ներգրավման ծրագիր՝ թիրախավորելով այն մատակարարներին, որոնց գործունեությունը կապված է բարձր արտանետումների հետ: Ներառել կլիմայական պահանջներ գնումների գործընթացներում և պայմանագրերում:
- **SBTi շրջանակ 3 թիրախների սահմանում.** կիրառել Գիտահեն թիրախների նախաձեռնության (SBTi) ուղեցույցները՝ Կլիմայական գործողությունների անցումային ծրագրի (CATP) շրջանակում, արժեքային շղթայի համար գիտահեն թիրախներ սահմանելու նպատակով: Իրականացնել միջկազմակերպական համեմատական վերլուծություն՝ իրագործելի թիրախների մակարդակներն ու ժամկետները գնահատելու նպատակով:

Իրականացման ուղեգիծ

Իրականացման համար, որպես ելակետային հիմք կծառայեն 2ՊՄԿ-ի 2022թ.-ի ջերմոցային գազերի գույքագրման տվյալները: Ընկերությունը կիրականացնի պարբերական մոնիթորինգ՝ համապատասխանությունը կլիմայագիտության արդի պահանջներին ապահովելու համար և հետամուտ կլինի SBTi նախաձեռնության իրականացմանը: Մեր ռազմավարությունը ներառում է կլիմայի փոփոխության հետևանքների մեղմման և հարմարվողականության միջոցառումներ, ինչպես նաև ռեսուրսների պատասխանատու կառավարում: 2ՊՄԿ-ն արդեն իսկ մեկնարկել է մի շարք ծրագրեր, որոնք էական քայլեր են կլիմայի փոփոխությանն ուղղված նախաձեռնություններում:



ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿՐՏԱՏՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Մեր բազմակողմանի մոտեցումը ներառում է անհապաղ գործողություններ և երկարաժամկետ ներդրումներ հիև գլխավորապես ուղղություններով՝

1.

Էներգաարդյունավետություն և գործընթացների օպտիմալացում

Մինչև 2030 թվականը մենք կավարտենք Էներգիայի ծախսի ստուգումները և տեխնիկական վերազինումը բոլոր հիմնական արտադրամասերում՝ հատուկ շեշտը դնելով ջարդման, մանրացման և օդափոխության համակարգերի օպտիմալացման վրա: Ուսումնասիրությունները փաստում են, որ այս միջոցառումները կարող են կրճատել մեր աշխատանքների հետևանքով առաջացող արտանետումները ավելի քան 10%-ով՝ միաժամանակ ապահովելով ծախսերի զգալի խնայողություն:

2.

Անցում վերականգնվող էներգետիկայի

Մեր ռազմավարական հանձնառությունն ուղղված է մինչև 2030 թվականը Էլեկտրաէներգիայի սպառման մեջ վերականգնվող աղբյուրների մասնաբաժինը առնվազն 30 տոկոսի հասցնելը՝ ապահովելով դրա շարունակական աճը մինչև 2040 թվականը: Մենք կուսումնասիրենք Սյունիքի մարզին բնորոշ արևային, հողմային և հիդրոէներգետիկ ներուժը՝ զուգահեռաբար իրականացնելով ներկայումս հանածո վառելիքից կախված տեխնոլոգիական գործընթացների Էլեկտրիֆիկացում:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ վերականգնվող էներգիայի 30% մասնաբաժնի ապահովումը կարող է կրճատել 2ՊՄԿ-ի ծրջանակ 1 և 2-ի համակցված արտանետումները մոտավորապես 17-18%-ով՝ դառնալով մեր ռազմավարության անկյունաքարը:

Ազգային Էլեկտրաէներգետիկ համակարգի ղեկարբնացման ժամանակացույցերից կախվածությունը նվազեցնելու նպատակով՝ 2ՊՄԿ-ն կիրականացնի միջոցառումներ, ուղղված Հայաստանի վերականգնվող էներգաարտադրողների հետ համագործակցության զարգացմանը, այդ թվում՝ երկարաժամկետ Էլեկտրաէներգիայի գնման պայմանագրերի (PPA) կնքմանը, ինչպես նաև կոնսուլտիվ վերականգնվող էներգիայի հավաստագրերի (REC) և/կամ ճագման երաշխիքների (GO) ձեռքբերումը:

Ավտոպարկի արդիականացում

3.

Տարեկան թիրախ. ներդնել 5-10 նոր հիբրիդային/Էլեկտրական տրանսպորտային միջոցներ՝ փոխարինելով հին դիզելային մեքենաները:

Ավտոպարկի այս համակարգված փոխակերպումը կներառի ավտոբուսները և թեթև մեքենաները, որոնք կլրացվեն Էկո-վարման ուսուցողական ծրագրերով: 2030-2040 թվականների հեռանկարում մենք կիրականացնենք զրոյական արտանետումներով հանքային բեռնատարների և տեխնիկայի փորձնական շահագործում և ներդրում հիմնական ենթակառուցվածքներում՝ զարգացող տեխնոլոգիաներին զուգահեռ: Ավտոպարկի արդիականացումը միջնաժամկետ հեռանկարում նախատեսվում է ապահովել արտանետումների մոտավորապես 7% կրճատում՝ միաժամանակ նվազեցնելով տեղական օդի աղտոտվածությունը: 2ՊՄԿ-ն կսահմանի գործող ավտոպարկի ելակետային վիճակը և կվերահսկի դրա արդիականացումը ողջ տարվա ընթացքում:

Տեխնոլոգիական գործընթացների Էլեկտրիֆիկացում և նորարարություն

4.

Մեր երկարաժամկետ տեխնոլոգիական ճանապարհային քարտեզը ներառում է ռազմավարական գիտահետազոտական և փորձարարական մշակումների գործընկերություն՝ հանքարդյունաբերության հիմնական գործընթացների, ներառյալ փոխադրման, հորատման, արտադրության և նյութերի բեռնաթափման Էլեկտրիֆիկացման համար: Ընկերությունը նախատեսում է կառուցել 150 ԳՎտժ/տարի հզորությամբ արևային Էլեկտրակայան, որը կկազմի 2ՊՄԿ-ի ընդհանուր էներգիայի սպառման 20%-ը: Մենք կշարունակենք ակտիվորեն վերահսկել զարգացող տեխնոլոգիաները, ինչպիսիք են ածխածնի որսումը, օգտագործումը և պահպանումը (CCUS):

Այս մոտեցմամբ մենք նախատեսում ենք 2026-2030 թվականներին ցածր ծախսատարությամբ միջոցառումների իրականացում, իսկ 2030-2040 թվականների ընթացքում՝ բարձր ազդեցություն ունեցող տեխնոլոգիաների կիրառություն, պայմանավորված դրանց բավարար զարգացմամբ:

Չարգացող տեխնոլոգիաների (ջրածնային բեռնատարներ, CCUS, Էլեկտրոֆիկացված ծանր տեխնիկա) կիրառման շրջանակում ՉՊՄԿ-ն կիրականացնի տեխնոլոգիական պատրաստվածության գնահատում և կսահմանի որոշումների ընդունման հստակ չափանիշներ (go/no-go): Մասնավորապես, ջրածնային բեռնատարների ներդրումը կիրականացվի միայն այն դեպքում, եթե ջրածնի արժեքը իջնի սահմանված շեմից ցածր, և դրանց կիրառումը համաշխարհային հանքարդյունաբերության ոլորտում ապացուցի բավարար գործառնական արդյունավետություն:

5. Արտադրական պրոցեսների օպտիմալացում

Լրացուցիչ նախաձեռնությունները ներառում են չվերահսկվող (ֆուգիտիվ) արտանետումների որսում կամ այրում, պայթուցիկ նյութերի օգտագործման օպտիմալացում՝ ազոտի օքսիդի արտանետումները նվազեցնելու համար, և շրջանաձև տնտեսության փորձի ներդրում: Հողերի վերականգնման և ծառատունկի ծրագրերը կնպաստեն ածխածնի կլանմանը՝ մնացորդային արտանետումները հավասարակշռելու համար, թեև մեր հիմնական ուշադրությունը մնում է ուղղակի կրճատումների վրա: Համայնքներում սոցիալական ծրագրերի ֆինանսավորումը, ինչպիսիք են արևային մարտկոցների, ջրատաքացուցիչների տեղադրումը, անտառավերականգնումը, լանդշաֆտային աշխատանքները ազդակիր համայնքներում, կօգնեն մեզ մեղմել ազդեցությունը:

Կլիմայական կառավարում

Սույն կլիմայական ռազմավարության արդյունավետ իրականացումը պահանջում է հստակ ձևավորված կառավարման համակարգ, հաշվետվողականություն և վերահսկողության վստահելի մեխանիզմներ: Այդ նպատակով ՉՊՄԿ-ն սահմանում է կլիմայական ռազմավարության իրականացման հետևյալ կառավարման կառուցվածքը.

Տնօրենների խորհրդի վերահսկողություն. Տնօրենների խորհուրդը իրականացնում է ընդհանուր ղեկավարում և կրում է վերջնական պատասխանատվություն կլիմայական ռազմավարության իրականացման և դրա արդյունքների համար: Խորհուրդը առնվազն տարեկան մեկ անգամ կքննարկի ռազմավարության իրականացման առաջընթացը՝ հիմնվելով արտանետումների կրճատման դինամիկայի, փուլային նպատակների իրականացման, ինչպես նաև ռիսկերի մակարդակում և ռազմավարական առաջնահերթություններում տեղի ունեցած Էական փոփոխությունների վերաբերյալ ստացված հաշվետվությունների վրա:

Կայուն զարգացման և ռիսկերի հանձնաժողով. ՉՊՄԿ-ի կանոնադրության համաձայն գործող Կայուն զարգացման և ռիսկերի կառավարման հանձնաժողովը ապահովում է լրացուցիչ վերահսկողություն՝ ինտեգրելով կլիմայական ռիսկերը ԸՆկերության ռիսկերի կառավարման համակարգում: Սա ներառում է անցումային ռիսկերի (Նորմատիվային, շուկայական, տեխնոլոգիական), ինչպես նաև ֆիզիկական ռիսկերի (ջրային սթրես, ծայրահեղ եղանակային երևույթներ) մշտադիտարկում, որոնք առնչվում են ՉՊՄԿ-ի գործունեությանը Սյունիքի մարզում:



**ԹԱՓԱՆՏԻԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՇԱՐԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱԿՈՒՄ**

Հաշվետվողականության մեխանիզմներ

Ընկերությունը հանձն է առնում մեր կայուն զարգացման գեկույցում ներկայացնել Կլիմայի փոփոխության վերաբերյալ ֆինանսական տեղեկատվության բացահայտման հարցերով աշխատանքային խմբի (TCFD) սահմանած չափանիշներին համահունչ հրապարակումներ, որոնք կանցնեն արտաքին հավաստագում: Դրանք կներառեն կառավարման վերահսկողության մեխանիզմների, ռազմավարության և սցենարների վերլուծության, ռիսկերի կառավարման գործընթացների, ինչպես նաև չափորոշիչների և թիրախների վերաբերյալ տեղեկատվություն:

Հիմնական չափորոշիչները կներառեն Շրջանակ 1 և Շրջանակ 2 արտանետումների տարեկան դինամիկան, Էներգիայի սպառումը մեկ միավոր արտադրանքի հաշվով, վերականգնվող Էներգիայի տոկոսային մասնաբաժինը և ավտոպարկի արդիականացման ընթացքը: Այս թափանցիկությունը թույլ է տալիս արտաքին շահառուներին գնահատել 2ՊՄԿ-ի կլիմայի փոփոխության կառավարման գործողությունների արդյունավետությունն ու վստահելիությունը, միաժամանակ բավարարելով ներդրողների, վարկատուների և կարգավորող մարմինների փոփոխվող պահանջները:

Սույն քաղաքականությամբ սահմանված թիրախները ենթակա են վերանայման կամ ընդլայնման՝ հաշվի առնելով գիտական նորագույն գեկույցները, ի հայտ եկող միտումները և գործող թիրախների իրականացման ընթացքը (կամ դրանցից շեղումները):

Արտաքին հավաստիացում և վավերացում

2ՊՄԿ-ն պարտավորվում է տարեկան հիմունքներով ապահովել Շրջանակ 1, 2 և 3 արտանետումների վերաբերյալ տվյալների սահմանափակ հավաստիացումը՝ անկախ երրորդ կողմի կողմից, նպատակ ունենալով մինչև 2030 թվականը անցում կատարել ողջամիտ/ավելի բարձր հավաստիացման մակարդակի: Հավաստիացման արդյունքները, ինչպես նաև ցանկացած Էական վերանայում կամ ճշգրտում, սահմանված կարգով կներկայացվեն և կիրառարակվեն Ընկերության տարեկան կայուն զարգացման հաշվետվությունում:

Շահագրգիռ կողմերի ներգրավման ռազմավարություն

Աշխատակիցների ներգրավումը նախատեսում է կլիմայի փոփոխության կառավարմանն ուղղված գործողությունների վերաբերյալ վերապատրասման ծրագրեր, Էներգիանախողության վերաբերյալ առաջարկների համակարգ և կայուն զարգացման ոլորտում արձանագրված արդյունքների արժևորում՝ ձևավորելով կլիմայական պատասխանատվության ներքին մշակույթ: Տեղական համայնքները կստանան բնապահպանական բարելավումների վերաբերյալ թափանցիկ տեղեկատվություն, ինչպես նաև նրանց հետ կանցկացվեն խորհրդակցություններ հարմարվողականության միջոցառումների շուրջ՝ ջրհավաք ավազանների կառավարման ոլորտում: Ներդրողներին ու վարկատուներին կտրամադրվի հստակ տեղեկատվություն կլիմայական ռիսկերի կառավարման և ապագա մարտահրավերներին պատրաստ բիզնեսի՝ մեր դիրքավորման վերաբերյալ, ինչը կարող է նպաստել կապիտալի ներգրավման ընդլայնմանը և ֆինանսավորման ծախսերի կրճատմանը: Հաճախորդների ներգրավումը կընդգծի 2ՊՄԿ-ի արտադրանքի կայունության շարունակական բարելավումը՝ դրանով իսկ ձևավորելով տարբերակման նոր հնարավորություններ շուկայում:

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՅԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Կարճաժամկետ և միջնաժամկետ
հեռանկար (2025 – 2030թթ.)

Տեխնիկապես կայացած և
ծախսարդյունավետ միջոցառումներ

- Վերականգնվող էլեկտրաէներգիա.**
Ընկերության ընդհանուր էլեկտրաէներգիայի առնվազն **30%-ի** սպառումը ապահովել վերականգնվող աղբյուրներից (և՛ արտադրական հզորությունների, և՛ վարչական ֆոնդի համար): Գնահատել երկարաժամկետ էներգիայի գնման պայմանագրեր (PPA) և վերականգնվող էներգիայի հավաստագրերը (REC):
- Արտադրական գործընթացների արդիականացում.**
Բարձրացնել էներգաարդյունավետությունը նպատակային վերազինումների և արտադրական գործընթացների օպտիմալացման միջոցով (օրինակ՝ բարձր արդյունավետությամբ շարժիչներ, մակրացման շղթաների բարելավում): Մշակել սահմանային նվազեցման ծախսերի կորը (MACC)՝ ներդրումների առաջնահերթությունները սահմանելու նպատակով:
- Տրանսպորտային միջոցների դեկարբոնիզացիա.**
- Կիրառել էկո-վարման ուսուցողական ծրագրեր և քաղաքականություն:
- **Էլեկտրական/հիբրիդային մեքենաների 20-30%** մասնաբաժնի ապահովում
Ընկերության ուղևորատար տրանսպորտային միջոցների ավտոպարկում:
- Վերականգնվող էներգիայով աշխատող շարժակազմի 15-30% մասնաբաժնի ապահովում՝ տեղում երկաթուղային փոխադրումների համար:
- Շենքերի արդիականացում.**
Կատարել Ընկերության շենք-շինությունների արդիականացում՝ ածխածնի ցածր մակարդակի արտանետումների նորմերին համապատասխանեցնելու համար (մեկուսացման բարելավում, ջեռուցման, օդափոխության և օդորակման արդյունավետ համակարգեր):
- Արևային էլեկտրակայանի շահագործում.** Մինչև 2028 թվականը ավարտել Տնտեսատեխնիկական հիմնավորումը և ֆինանսավորման պլանը: Սկսել շինարարական աշխատանքները՝ ապահովելով կայանի շահագործման հանձնումը 2030–2031 թվականներին: Աստիճանաբար տարեկան մինչև 150 ԳՎտժ արտադրություն ապահովում, ինչը ծածկում է Ընկերության ընդհանուր էներգիայի սպառման մոտ 20%-ը:

Երկարաժամկետ հեռանկար
(2031 – 2040 թթ.)

Չարգացող կամ ավելի մեծ ծախսեր պահանջող լուծումներ, որոնք հնարավորություն կտան բացահայտել արտանետումների կրճատման ամբողջական ներուժը

- Ամբողջական անցում վերականգնվող էներգետիկայի.**
Ընդլայնել վերականգնվող էներգիայի աղբյուրների մասնաբաժինը՝ բոլոր արտադրական միավորների և ենթակառուցվածքների համար մինչև **100% վերականգնվող էլեկտրաէներգիա** ապահովելու համար:
- Ավտոպարկի կողմից ածխածնի արտանետումների ամբողջական կրճատում.**
- **100% վերականգնվող էներգիայով աշխատող շարժակազմի և ջրածնային վառելիքով աշխատող** ծանր տեխնիկայի շահագործման գործարկում (կախված փուլային որոշումներից):
- **100%-ով անցում էլեկտրական/հիբրիդային** ուղևորատար տրանսպորտային միջոցների:
- Շենքային ֆոնդի ամբողջական արդիականացում.**
Բոլոր **շենքերի 100%** արդիականացում՝ ածխածնի ցածր մակարդակի արտանետումների նորմերին համապատասխանեցնելու համար:
- Արտադրական գործընթացների էլեկտրաֆիկացում/վառելիքի փոխարինում.**
Տեխնիկապես իրագործելիության պարագայում էլեկտրիֆիկացնել վառելիքի վրա հիմնված մնացած գործընթացները, իսկ այն սարքավորումների համար, որոնք դեռևս հնարավոր չէ լիարժեք էլեկտրիֆիկացնել, **անցում կատարել ածխածնի ցածր արտանետումներ ապահովող վառելիքների** (օրինակ՝ կանաչ ջրածնի):
- Շրջանակ 3 արտանետումների կառավարում.** Իրականացնել մատակարարների ներգրավման ծրագիր: Սահմանել և համակարգված կերպով վերահսկել Շրջանակ 3 արտանետումների կրճատման թիրախները՝ SBTi մեթոդաբանությանը համապատասխան: Ապահովել տվյալների տարեկան հաշվետվողականություն:

Պահուստային միջոցառումներ

Եթե հիմնական տեխնոլոգիաները չեն բավարարում սպասելիքները կամ ծախսերը գերազանցում են կանխատեսումները, ՉՊՄԿ-ն ակտիվացնում է արտակարգ իրավիճակների ծրագրերը, որոնք ներդրումները կուղղորդեն ապացուցված այլընտրանքների: Կլիմայի փոփոխության ճանապարհային քարտեզը ինտեգրված է հանքի պլանավորման և կապիտալի բաշխման ընդհանուր գործընթացներում՝ հետևողականություն և արդյունավետություն ապահովելու համար: